Յերկնահանդէս տօնի հոգեւորոգ ուրախութեան վեհապանծ Օծման՝ Գէորգ Ե. Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի եւ Սրբազնասուրբ Հայրապետի ամենայն Հայոց.

ՁՕՆ

«Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնքն ի նաւակատիս Ս. եկեղեցւոյ, քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից՝ ի լուսաւորել զկաթողիկէ Ս. եկեղեցի»։ (շարական)

Ո՛վ Դու՝ փառաւորեալդ երկնային փառօք՝ աստուածակառոյցդ Մայր Էջմիածին—Լուսակերտ Սիոնդ Հայկեան, թագդ պարծանաց պարթեւազնեայն Մեծին Տրդատայ և նորինն Սրբոյն Գրիգորի՝—գերերջանիկ Բ. Լուսաւորչի Հայաստանեայցս, որ ընտրեցար լինել Տեղի Իջման որդւոյն Աստուծոյ՝ հիմն և նախաթոռ նուիրական գահոյից հայազան առաքելականն Կաթողիկէ եկեղեցւոյ։

Քեզ ի յերկնուստ անտի շնորհեցաւ կենարարն շունչ հոգենորոգ վերածնութեան արամազնէիցս համայն՝ առ ի լինելդ շատմարան երկնաձիր շնորհաց և անսպառ աղբիւր Աստուածայնոյն գիտութեան և գաւազան շնորհաբաշխ իշխանութեանց արժանընտիր կոչեցելոցդ ի հովութիւն։

Ո՛վ՝ սերկեւանս երանականն մեծի սքանչելեաց՝ զարմանահրաշ հանդիսիդ՝ կատարելոյն ի վերայ սրբազան բարձանց արքայապսակ մեծի սեղանոյդ երկնապարգև իշխանութեան, ուր հրաշափառապէս երկնից և ծնանիս քահանայապետ յաւիտենից՝ ի զօրացուցանել և ի լուսաւորել զբանաւոր անդաստան հայրաստունկ այգւոյն նախկին Լուսաւորչացն Թադէի և Բարդուղիմեայ Սրբազնից առաքելոցն Հայաստանեայց։

Որ օծանես զընտրեալն Աստուծոյ ի վերայ թեոց երկնասլաց արծւոյն՝ Հայրապետականն խորհրդանշանի՝ զեղմամբ սրբալոյսն միւռոնի և շնորհաց կենդանարարն առատաձեռ Ս. Հոգւոյն, ի հովուապետութիւն ընդհանրականն հայ եկեղեցւոյն։

Օ՜ն ուրեմն՝ ուրախ լեր և ցնծա Մայր Սիոն՝ համասփիւռ դստերօքդ հանդերձ, հանելով զպատմուճան լալեաց սգոյդ, ի զգեցումն պերճափառ վայելչութեան փառացն յաւիտենականին։

Պայծառացիր հանդիսարանդ վեհապանծ՝ ի յերկնագղորդն հանդէս հարսանեացդ՝ փառաշուք պսակման Մեծի Փեսայիդ որ-

բացեալ եկեղեցւոյդ՝ յանդրաւականն ուրախութիւն ծոցածին հարազատիցդ՝—մանկանց Մեծի և Ս. Սիոնիդ։

Փառս բիւրապատիկս վերառաքեմք Քեզ, հրաշագործ Ճարտարապետեալդ յերկնուստ՝ կարակնակամար տաճարդ արքայաշէն, խարիսխդ ամրակուռ, նաւահանգիստ անբոյթ տանն ողջոյն արամազնէիցս, որ այսօր յաղթականն պսակաւ Փեսայիդ փառաց՝ լնուս զամենեսեանս անճառելին խնդութեամբ՝ շնորհաբաշխելով համազգային և կայսերական իրաւամբ և օրինօք պատուեալ քահանայապետ քաջարթուն և բարի՝ ի լցումն լրման պիտոյից—կարեաց համանդամային բարօրութեան եկեղեցւոյ և որերոյն ողջոյն։

Փառք և Քեզ՝ փառաւորեալդ փառօք Տ. Տ. Գէորգ Ե. Աստուածապսակ Սրբազնասուրբ Հայրապետ Համայն Հայոց, որ ի լրումն նուիրապետականութեան օրինաց և կարգաց՝ ի ձեռն երկոտասան առաքելասարաս արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց բազմեալ Լուսաւորչեանն գերագահ աթոռ դատողական՝ առ ի դատել զամենեսեանս՝ վերակոչեցար լինել ընդունարան եօթնարփեան շնորհաց հոգւոյն՝ ի բաշխումն կարօտ հօտիդ ժիր մշակ՝ ի հերկագործութիւն, և հովիւ քաջ՝ ի սերմանումն անծայրածիր անդաստանեայցդ ազգայնական անաղարտ Ս. Եկեղեցւոյդ և խաշինդ արօտի Բանին կենաց և իմաստութեան։

Արդ՝ ուրախ լեր և պանծա՛ շնորհազարդ Քահանայապետ Մեծ՝ ի տես ի Քեզ խուռն երամովին ինքնայօժար դիմեալ պատկառելի բազմութեան՝ եկելոցն ի մտիցն արևու ցելս նորին, որոց տարակեաց, համարնակ՝ հարք և մարք, եղբարք և քորք և մատաղերամն զաւակունք՝ ի մեծաշուք բարերթիդ՝ և ցանկալի վերադարձիդ յարքայանիստ քաղաքն մեծ՝ առ Օգոստափառ Կայսրն Մեծին Ռուսիոյ Նիկոլայ Ալէքսանդրովիչն՝ առ յոյժ սիրեցեալ Մեծ Հովանաւոր թագաւորն մեր, առ ճանապարհաւն ողջոյն՝ չ'դադարէին ի համբուրելոյ քղանցից հանդերձիցդ, և սփռելոյն զառաթուրս գարշապարացդ՝ հոյլ ի հոյլս բիւրապսակ, անուշաբոյր երփներանդ ծաղկանց, որք և ի ձայն որոտալից, սրտաբուղխ ովսաննայից փառաւորէին զՑուիչն բարեաց յերկինս։

Ուրախ լեր և բերկրեա՛, և դու բազմավիշտ ժողովուրդ հայոց, որ ջատագովականն մարտիրոսութեամբ դիւցազնեայ հարցդ՝ բարձր ի գլուխ պահեցեր ոչ միայն Զքեզ և Զեկեղեցիդ, այլ և զաթոռ և գաւազան նուիրապետականութեանն, որպէս զաւանդ մայրենի կրօնի և լեզուի, ի կենդանութիւն և ի փառս անուանդ։

Օրհնութիւն Քեզ և քոյդ դարուց ի դարս յաւերժ յիշատակաց արժանի նախնեացդ։

Վեհափառ Տէր! Աստուածարեալ Վեհ Հայրապետ!

Օրհնեա՛ և զամենեսեանս, որ կամք յակնածալիքն յողջոյն խոնարհագոյն որդիականն համբուրիցս Սրբազնասուրբ Աջոյ Օծելոյդ։

Օրհնեա՛ և զայնոսիկ, որք ենն ի սիրեալս և յոլորտս աշխարհաց և ազանց՝ կարօտիւ շնորհացդ։

Զօրացո՛ զմեզ զամենեսեանս զօրութեամբ Ս. Հոգւոյն՝ ի զոդ անքակտելին միութեան և համադումար լրման հայ անուան և ազգայնութեան և կրօնի, որ ընդ Օծեալ Աստուածատիպ գագաթանդ և Գլխոյդ Հայազն ընդհանրական կրօնի և Աստուածակերտ լուսածին Կաթուղիկէիդ՝ անմահիցն Լուսաւորչի, Տրդատայ, Աշխէնի, Խոսրովադխտի, Վռամշապուհոյ, Մեծին Ներսիսի, և թարգմանչացն Սահակայ, Մեսրոպայ, և Սրբազնից աշակերտացն՝ պարգևողացն երանաւէտ լուսոյ Քրիստոսեան հաւատոյ և շնորհաբաշխողացն հայ գրչի գիտութեան և հանճարոյ և կաճառացն իմաստնից և բարոյից, որք կանն աղօտացեալ և կարօտին խոհականն վերածնութեան վերանորոգ կանոնաց հովանաբար Աջոյդ խնամած տնօրէնութեան։

Արդ՝ ո՛վ հանրատենչ Ս. Հայրապետ! Մեք ամենեքեան շուրջ պատեալ զաթոռով Գահոյիցդ՝ սրտատրոփ խնդութեամբ լիուլին բերկրանաց՝ մատչիմք ի շնորհաւորութիւն Վեհագոյն Սրբազնասուրբ Օծմանդ, վերառաքելով առ Բարձրեալն աղօթս ցնծագին մաղթանաց՝ գոչեմք միաբերան ի ձայն քաղցրաւաչ.—

«Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, փայլեցո՛ զմայրն մեր Սուրբ Էջմիածին՝ զսիրան հայութեան՝ զորդւովք իւրովք, որպէս զարեգակն, և շնորհազարդ պայծառացո՛ զկեանս և զգաւազան իշխանութեան մերոյ Նորապսակ Հայրապետիս՝ և զգործս ձեռացն՝ և մերս ամենեցուն, զի օրհնեսցուք զքեզ Տէր, այժմ և յաւէտ, քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից՝ ի լուսաւորել զԿաթողիկէ Ս. եկեղեցի և զհամատարած մանկունս Նորին ի փառս Բարձրելոյն»։

Ամենախոնարհ ծառայ եւ որդի.—

Միաբան Մեծի ուխտի Մայր Աթոռոյ

Սիօն վարդ. Տէր Մանուէլեան.

1912 1-ն Յուլիսի
ի Վաղարշապատ.